



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 08Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 09Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 21.12.2017թ. ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-34-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատավորներին ամենամյա հերթական արձակուրդ տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 09Լ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 30-ից:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ

2018թ. հունվարի 29
ք. Երևան

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2018թ. հունվարի 29-ի թիվ 08Լ որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների խորհրդի
2007թ. հուլիսի 10-ի թիվ 09Լ որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԱՍԵՆԱՍՅԱ ՀԵՐԹԱԿԱՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության դատավորներին ամենամյա հերթական արձակուրդի տրամադրման պայմանները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Դատավորների ամենամյա հերթական արձակուրդի տրամադրման նպատակով դատարաններում կազմվում է ամենամյա հերթական արձակուրդի ժամանակացույց (այսուհետ՝ ժամանակացույց):

Ժամանակացույցը պետք է կազմվի այնպես, որ չխոչընդոտվի դատարանի բնականոն գործունեության իրականացումը:

1.2 Դատավորները (դատական կազմերը) մինչև տվյալ տարվա հունվարի 20-ը դատարանի նախագահին գրավոր ներկայացնում են իրենց համար նախընտրելի ամենամյա արձակուրդի ժամանակահատվածը:

1.3 Ժամանակացույցը հաստատվում է համապատասխան դատարանի նախագահի հրամանով:

1.4 Ժամանակացույցը կազմվում, հաստատվում և Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը: Հիշյալ ժամանակացույցն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի ղեկավարին՝ հրապարակելու նպատակով:

2. ԴԱՏԱՎՈՐԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

2.1 Ամենամյա հերթական արձակուրդը դատավորներին տրամադրվում է դատարանի նախագահի հաստատած ժամանակացույցի համաձայն՝ երեսուն աշխատանքային օր տևողությամբ: Դատավորին ամենամյա հերթական արձակուրդ կարող է տրամադրվել մասերով, քայց ոչ ավելի, քան երեք մասով:

2.2 Յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ տարում: Աշխատանքի առաջին տարվա համար ամենամյա արձակուրդը, որպես կանոն, տրամադրվում է տվյալ դատարանում անընդհատ աշխատանքի 6 (վեց) ամիսը լրանալուց հետո:

2.3 Ամենամյա արձակուրդի տեղափոխումը թույլատրվում է միայն դատավորի միջնորդությամբ կամ համաձայնությամբ և կատարվում է համապատասխան հրամանով: Տեղափոխված ամենամյա արձակուրդը, որպես կանոն, տրամադրվում է նույն աշխատանքային տարում: Դատավորի միջնորդությամբ կամ համաձայնությամբ ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը կարող է տեղափոխվել և միացվել հաջորդ տարվա ամենամյա արձակուրդին կամ տրամադրվել առանձին:

2.4 Դատավորն ունի նաև օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ արձակուրդի իրավունք, որը դատավորի և դատարանի նախագահի փոխադարձ համաձայնությամբ կարող է միացվել ամենամյա հերթական արձակուրդին:

2.5 Հաստատված ժամանակացույցին չհամապատասխանող ժամանակահատվածում դատավորին արձակուրդ կարող է տրամադրվել դատարանի նախագահի կողմից՝ փոխադարձ համաձայնությամբ՝ ապահովելով դատարանի բնականոն գործունեության իրականացումը:

2.6 Ամենամյա հերթական արձակուրդի տրամադրման համար դատավորն արձակուրդ մեկնելուց առնվազն 10 (տասը) օր առաջ գրավոր դիմում է ներկայացնում դատարանի նախագահին:

2.7 Դատավորներին արձակուրդ տրամադրելու հրամանների պատճենները դատարանի աշխատակազմի ղեկավարը պարտավոր է եռօրյա ժամկետում ուղարկել Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի կենտրոնական մարմին:

2.8 Հաստատված ժամանակացույցին չհամապատասխանող ժամանակահատվածում արձակուրդ տրամադրելու և դրա պատճառների մասին տվյալ դատարանի նախագահը եռօրյա ժամկետում գրավոր իրազեկում է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին:

2.9 Արձակուրդի տրամադրման հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից համապատասխան դիմումը կամ հաղորդագրությունն ստանալուց հետո հրավիրվող առաջիկա նիստում:

3. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

3.1. Ժամանակացույցը կազմվում է երկու օրինակից՝ մեկ օրինակը պահվում է տվյալ դատարանի աշխատակազմում, մյուս օրինակը՝ Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտում:

3.2 Ժամանակացույցն առնվազն պետք է ներառի՝

ա) դատարանի անվանումը,

բ) դատավորի անունը, ազգանունը,

գ) այն ժամանակահատվածը, որի համար տրամադրվում է արձակուրդը,

դ) արձակուրդի տևողության ժամանակահատվածը:»: